ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՓԻՆԵ ԹՈՐԻԿՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.128

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացնում ենք սփյուռքահայ նկարիչ Սարգիս Խաչատուրյանի արվեստի առաջին փուլը, երբ պատանին սկզբնական քայլերն էր անում դեպի արվեստի աշխարհ: Առանձնահատուկ կարևորել ենք պատմաքաղաքական և բոլոր արտաքին գործոնները, որոնք նպաստել են արվեստագետի կայացմանը:

Խաչատուրյանի ստեղծագործական առաջին շրջանը որոշակիորեն կապված է եղել իր ժողովրդի ողբերգության և տառապանքի հետ, որի ականատեսն է նաև նկարիչը: Դեռ մանկուց Համիդյան ջարդերից մազապուրծ եղած նկարչի ու իր ստեղծագործության վրա այս ամենը, բնականաբար, իր հետքն է թողել:

Եղեռնն իր արտացոլումը գտավ նկարչի շուրջ 500 գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքներում: Իր կյանքի ընթացքում այդ գործերը Խաչատուրյանը ներկայացրեց ողջ Եվրոպային:

Խաչատուրյանը մշտապես գտնվել է փնտրտուքի մեջ, ինչով էլ պայմանավորված է արվեստագետի գործերի բազմաթեմատիկ, տարբեր տեխնիկաներով կատարած, բազմաոճ և բազմաժանր լինելը: Նա իրեն փորձում էր ամենուր՝ ստեղծելով ուրույն «խաչատուրյանական» արվեստ:

Հոդվածում ներկայացված են Խաչատուրյանի՝ «Հայկական շրջան»-ի արվեստի նկարագիրը և վերջինիս ներհատուկ պատմական և քաղաքական իրադարձությունները, որոնք ձևավորեցին նկարչի ստեղծագործական կայացման առաջին շրջանը: Հոդվածը միտված է նոր հայացքով դիտարկելու նկարչի

արվեստը և ի մի բերելու այս շրջանի պատմական առանձնահատկությունները, որոնք արծարծվել են նրա՝ եղեռնի թեմայով աշխատանքներում:

Բանալի բառեր ու բառակապակցություններ. *Սարգիս Խաչատրյան, արվեստ, եղեռն, գաղթականներ, Սարգիս Խաչատրյան, Արարատ, Կոստնանդնուպոլիս, հայկական շրջան, հոգեբանական գործեր:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովուրդն իր մշակույթը կերտել է ոչ միայն մայր հողում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Դարերի ընթացքում քաղաքական պայմանները, ինչպես նաև մշակութային, կրթական օջախների բացակայությունը ստիպել են հայ արվեստագետներից շատերին ապրել և ստեղծագործել այլ երկրներում: Անցած դարի սփյուռքահայ արվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկն է Սարգիս Խաչատուրյանը: Սերը դեպի ճանապարհորդությունն ու նոր բացահայտումները նրա վրձնին բազմերանգություն է տվել՝ բաժանելով Սարգիս Խաչատուրյանի արվեստը երեք շրջանի՝ «Հայկական», «Պարսկական» և «Հնդկական»:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սարգիս Խաչատուրյանի արվեստը, կյանքը ու գործունեությունը, արվեստաբանական լայնածավալ վերլուծության չեն ենթարկվել: Հետևյալ ուսումնասիրությունները միտված են ավելի ընդգրկուն և ամբողջական ներկայացնելու նկարչի կյանքի և ստեղծագործական գործունության բոլոր փուլերը, որոնց շնորհիվ ճշգրիտ պատմաժամանակագրական հաջորդականությամբ կկառուցվեն նրա կյանքի և ստեղծագործական գործունեության փուլերը: Ելնելով այդ ամենից՝ աշխատանքը կատարվել է պատահամեմատական, վերլուծական, նկարագրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սարգիս Խաչատուրյանը ծնվել է 1886 թվականին Արևմտյան Հայաստանի Մալաթիա քաղաքում: Խաչատուրյանի հայրը Թավրիզից էր, իսկ մայրը՝ Մալաթիայից (**Կենսագրական տեղեկութիւններ ..., 1939**): Սարգիսը մեծացել է նյութապես չափազանց համեստ ապրուստ ունեցող ընտանիքում՝ մոր և երեք եղբայրների հետ: Մանկուց՝ դեռևս հինգ տարեկանից, ի հայտ է եկել նրա շնորհը դեպի նկարչությունը:

Շուտով՝ 1894-1896թթ., սկսվեցին հայերի զանգվածային ջարդերը Արևմտյան Հայաստանում: Նկարչի հայրենի քաղաք Մալաթիայի հայ բնակչությունը ևս ենթարկվեց այդ սոսկալի ջարդերին, որից պատանի նկարիչը բարեբախտաբար փրկվեց՝ ապաստանելով եկեղեցում:

Տեղի Ազգային վարժարանում նախնական կրթություն ստանալուց հետո 16-ամյա Սարգիսը 1902 թվականին մեկնում է Սանասարյան վարժարան, որտեղ սովորում է անվճար հիմունքներով:

Այդ տարիներին երիտասարդ Խաչատուրյանը քիչ էր մասնակցում աշակերտների խաղերին: Նա ազատ ժամանակ նկարում էր, ձեռքում միշտ պահում թուղթ և մատիտ: Սանասարյան վարժարանն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի քաղաք Մալաթիա ու մի կարճ ժամանակահատված գծագրություն է դասավանդում հայրենի կրթօջախում՝ Մայր վարժարանում: Ապա նորաթուխ նկարիչը Մալաթիայից տեղափոխվում է Այնթապ, որտեղ դասավանդում է Վարդանեան վարժարանում (**Թորանեան Թ., 1983**): Ավելի ուշ Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանի հորդորով Խաչատուրյանը մեկնում է Հալեպ, որտեղ նկարազարդում է Սուրբ Քառասնից Մանկաց եկեղեցին և Օթել Պարոնը[1]:

Արդարև, 22-ամյա Խաչատուրյանի առաջին լուրջ քայլերը կարող ենք համարել Սուրբ Քառասնից Մանկաց եկեղեցու պատերի և առաստաղի նկարազարդումները: Նա եկեղեցու կուսակալի դիմանկարի համար

[1] Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյան (1869-1951) Պոլսի Պատրիարքական տեղապահ, ուսուցիչ և տեսուչ Սեբաստիայի և Եվդոկիայի հայկական որբանոցներում:

վարձատրվում է և այդ գումարով մեկնում Պոլիս՝ մի կարճ ընթացք մնալով այնտեղ[2]: Խաչատուրյանը աչքի է ընկնում իր ընդունակություններով: Տեղի ազդեցիկ իշխանավոր Գաբրիել Նորատունկյանը, որը միաժամանակ Սանասարյան վարժարանի խնամակալների նախանդամ էր, միջնորդում է իրենց նախկին սանի՝ երիտասարդ Խաչատուրյանի համար, որպեսզի մեկնի Հռոմ՝ ուսանելու Գեղարվեստի ակադեմիայում[3]: 1908թ. Սարգիսը ընդունվում է Հռոմի Գեղարվեստի ակադեմիա (այժմ՝ Հռոմի Գեղեցիկ արվեստների ակադեմիա), որը 1911 թվականին ավարտում է գերազանցությամբ՝ ոսկե մեդալով: Ինչպես ընդունված էր այն ժամանակ, ակադեմիան ավարտելուց հետո շրջանավարտները շրջագայում էին եվրոպական քաղաքներով, ուսումնասիրում մշակույթը, թանգարանները: Խաչատուրյանը ևս շրջեց մոտ մեկ տարի և միայն դրանից հետո՝ 1912 թվականին վերադարձավ Պոլիս, Սանասարյան վարժարանում նկարչություն դասավանդելու համար: Սակայն շուտով՝ նույն թվականին, շնորհը կատարելագործելու նպատակով մեկնում է Փարիզ՝ ընդունվում Դեկորատիվ արվեստների դպրոց, որտեղ սովորում է 1912 թվականից մինչ 1914 թվականը (Այժմ՝ Փարիզի Գեղեցիկ արվեստների ազգային բարձրագույն դպրոց (ֆր.՝ École nationale supérieure des Beaux-Arts, (ENSBA), գեղարվեստի ազգային դպրոց Փարիզում):

Հերթական անգամ գերազանցությամբ ավարտելով ուսումը՝ արվեստագետը մեկնում է Շվեյցարիա՝ Ժնև, որտեղ սովորում է մանկավարժություն, հոգեբանություն և փիլիսոփայություն, ապա Մյունխեն՝ կատարելագործելու համար նկարչական հմտությունները:

Փոքր անց Խաչատուրյանը վերադարձի ճանապարհ է բռնում դեպի Էրզրում, որպեսզի դասավանդի Սանսարյան վարժարանում, սակայն սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Նկարիչը կարողանում է ազատվել

[2] Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցի՝ հայկական եկեղեցի Սիրիայի Հալեպ քաղաքում: Եկեղեցին 15-րդ դ. կառույց է:
[3] Գաբրիել Նորատունկյան (1882-1936), հայ խոշոր քաղաքական գործիչ, դիվանագետ, մշակույթի գործիչ այդ տարիներին Թուրքիայի հանրային աշխատանքների նախարար:

զինվորագրելուց և մեկնում է Կովկաս՝ Թիֆլիս (այժմ՝ Թբիլիսի), որտեղ իջևանում է Արտաշես Սարյանի տանը: Թիֆլիսցի մեկենաս Ալեքսանդր Մելիք-Ազարյանցը Խաչատուրյանին տրամադրում է և՛ բնակարան, և՛ արվեստանոց: Այստեղ էր կարճ ժամանակով ապրում նաև զորահրամանատար, պետական գործիչ զորավար Անդրանիկը: 1920թ. Խաչատուրյանը ամուսնանում է Արտաշես Սարյանի աղջկա՝ Վարդանուշ Սարյանի (նկարչուհի՝ Վավա Սարգիս Խաչատուրյան) հետ:

Թիֆլիսը այս տարիներին լեցուն էր հայ արվեստագետներով: Այստեղ էին հավաքվել անցած դարի հայ մշակույթի կարկառուն ներկայացուցիչները: Թիֆլիսում Սարգիս Խաչատուրյանը ծանոթություն է հաստատում իր ժամանակաշրջանի մտավորականների հետ, մտերմանում Եղիշե Թադևոսյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Վարդգես Սուրենյանցի, Փանոս Թերլեմեզյանի, Վանո Խոջաբեկյանի, Մարտիրոս Սարյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Երվանդ Քոչարի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Վահան Տերյանի, Ռոմանոս Մելիքյանի, Գարեգին Հովսեփյանի, ինչպես նաև ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի հետ, որը շատ էր հավանել Խաչատուրյանի գործերը: Հովհաննես Թումանյանը մի առիթով ասում է. «Սարգիս ջան, ինչ որ դու պարգևել ես մեզ քո վրձնով, մենք չենք կարող վերարտադրել մեր գրչով: Քո այս կտավներն օտարներին լավագույնս պիտի ծանոթացնեն մեր ժողովրդի տառապանքների հետ» (**Հայաստանի ազգային պատկերասրահ,** տես նաև՝ **Վարսյան Շ., 1974, Խաչատուրեան Ա., 1971**):

Եվ հենց այս միջավայրում էլ ստեղծագործում է նկարիչը: 1914թ. Խաչատուրյանը ստեղծում է «Հայերի տեղահանությունը» կտավը, որից էլ սկիզբ է առնում նրա՝ հայոց ցեղասպանությանը նվիրված նկարների շարքը: Այս թեմայով ստեղծել է տարբեր չափերի ավելի քան 500 նկար: Տարաբախտորեն, թե ճակատագրորեն, նկարչի ստեղծագործական առաջին շրջանը կապված է դարասկզբի ոճրագործության՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանության հետ:

Նկարչի վրձնի շնորհիվ ծնվում են հայ ժողովրդի ողբերգության, կոտորածների ու տառապանքի մասին պատմող կտավներ:

Այս շրջանում ստեղծված գործերը տեսածի և վերապրածի պատկերումն են՝ ողողված սուր զգացմունքներով, հոգեբանական ծանր վիճակի դուրսժայթքմամբ: Դրանցում լսելի է հայ ժողովրդի հոգու ճիչը: Ցայտուն, արտահայտիչ ու տիպական կերպով են պատկերված կանանց և երեխաների կերպարները: Միաժամանակ այս գործերը ներկայացնում են անկոտրում ոգու տեր մի ժողովրդի պատմություն, ժողովուրդ, որն ունի տոկուն և դիմացկուն բնավորություն, ինչպիսին էր նաև Խաչատուրյանը: Մի շարք ստեղծագործություններում՝ «Բամբակահավաք (Արարատ լեռը)», «Գյուղացիները պարում են գյուղի հրապարակում», «Զոհաբերություն և պարային ուխտագնացություն», «Կլոր պար», «Հարսանեկան երթ», «Վարագի տոնը», նրա պատկերած հայ գաղթականների կերպարներում արվեստագետը որսացել է ապագայի հանդեպ լավատեսական սպասումները: Խաչատուրյանը հայ ժողովրդին պատկերել է ոչ միայն դժվարին, սոսկալի պայմաններում, ողբերգական իրավիճակներում, այլ նաև դեռ նոր մազապուրծ եղած ու վիշտը չամոքված սրտով ուրախ առիթների շուրջ համախմբած ժամանակ: Այդպիսի աշխատանքներից են՝ «Պարող սասունցիները», «Հարսանիքից առաջ», «Տոն Վարագա վանքի մոտ» և մի շարք այլ ստեղծագործություններ, որոնք հայ ժողովրդի վերապրելու կամքի վկայությունն են: Խաչատուրյանի աշխատանքներում մարդիկ նույնիսկ տեղահանության ժամանակ նման չեն իրենց գլուխը կորցրած ամբոխի:

1916 թվականին Խաչատուրյանը մասնակից է դառնում Թիֆլիսում հիմնված «Հայ արվեստագետների միության» (ՀԱՄ) կազմակերպմանը:

Կովկասում նկարիչը 1914-1917թթ. եռանդուն ստեղծագործական գործունեություն է ծավալում՝ շրջագայելով տարբեր վայրերում: Լինում է Բաթումում, Դիլիջանում, Ալեքսանդրապոլում (այժմ Գյումրի), Ղարաքիլիսայում (այժմ Վանաձոր), ինչպես նաև Երևանում և Էջմիածնում, որտեղ ապաստանել էին հայ գաղթականները: Բացօթյա կացարանները, եկեղեցիների բակերը, կայարանամերձ շինությունները լի էին

գաղթականներով: Նա շրջում էր ամենուր և հավերժացնում է իր տեսածը, եղեռնի պատմությունը:

Խաչատուրյանի վրձնով կերտվում են նաև Հայոց բնաշխարհի խորհրդանիշները՝ Արարատ լեռը և Սևանա լիճը: 1916 թվականին, երբ նկարիչն արդեն գտնվում էր Հայաստանում, գերվում է հայկական բնաշխարհով, մասնավորապես Արարատով, ստեղծում նկարների շարք՝ նվիրված բիբլիական լեռին. «Արարատ» (1916), (1919), (1921), «Արարատ և Արարատյան դաշտավայր» (1916-1917), «Հայկական պար Արարատ լեռան դիմաց», «Արարատը երկաթուղային կայարանից» և այլ աշխատանքներ: Այդ գործերը տարբերվում են թե՛ կատարողական տեխնիկայով, թե՛ հորինվածքով: Ակներև է, որ Խաչատուրյանի համար Արարատ լեռը սրբություն է, հայ ժողովուրդի դարավոր խորհրդանիշը և ներշնչանքի աղբյուրը:

Խաչատուրյանի «Հայկական շրջան»-ի ստեղծագործությունները ներկայացնում են հայրենի բնաշխարհը, հայ մարդուն իր տառապանքով, վշտով, աշխատանքով և նաև ուրախության ու տոնախմբությունների ժամանակ: Այդ թեմաները ներկայացվում են կենցաղային և բնանկարի ժանրերի միջոցով, հաճախ նաև դրանք միասին են հանդես գալիս: Կտավներում տեսնում ենք ազգային տարբեր տարածաշրջանների տարազով հայ գաղթականների, որոնք ապաստանել են Էջմիածնի վանքի բակում:

Աշխատանքներից շատերը պարզ գծագրություններ են՝ անավարտության տպավորությամբ, սակայն դրանցում երևում է, որ Խաչատուրյանը ոչ միայն գույնով փայլուն աշխատող արվեստագետ է, այլև ծավալների և ձևի վարպետ: Այս գործերը մոտ են բացօթյա նկարչության սկզբունքերին, այդուհանդերձ, նկարիչը կարողացել է մի քանի գծերի օգնությամբ, իսկ որոշ աշխատանքներում էլ՝ թույլ, թեթև, ջրաներկին հատուկ երանգային անցումներով տալ կեցվածքների ու դեմքերի ակնհայտ բնութագրումները: Նկարիչն իր կտավներով Եվրոպային ցույց է տալիս հայ ժողովրդի ցավն ու տառապանքը, իսկ Եվրոպան այդպես էլ լուռ էր՝ չլսելով Խաչատուրյանի հոգու ճիչը: Սարգիս Խաչատուրյանին նույնիսկ անվանում

էին «Հայոց վշտի երգիչ», «Հայաստանի երգիչ» (**Կուրղինյան Կ., 1971, Կուրղինյան Կ., 1967**) :

Հայ մեծագույն գրող Ա. Իսահակյանը նրան անվանում է «Ազգային մեծ նկարիչ» և ասում. «Մենք գրչով չենք կարող տալ այն, ինչ որ դու անում ես վրձնով» **(Հայաստանի ազգային պատկերասրահ**, տես նաև՝ **Խաչատուրեան Ա., 1971):**

Գաղթականության ողբերգական օրերը պատկերող նկարների շարքում Խաչատուրյանը հանդես է գալիս որպես իր ժողովրդի ծանր հոգեբանական ապրումները տեսած և վերապրած նկարիչ: Խաչատուրյանի աշխատանքների առաջին փուլում տեսնում ենք տարբեր գեղանկարչական եղանակներով կատարված ստեղծագործություններ: Այս շարքում ոչ շատ մանրամասներով մշակված աշխատանքներում դրսևորվում է բովանդակությունը: Որոշ գործերում՝ «Գաղթականներ» (1915), «Հայ կինը ազգային տարազով (Գաղթական կինը)» (1915), «Հայ փախստական աղջիկ» (1919), «Հայկական ֆիգուրներ. նստած և կանգնած կանայք» (1919) և (1921) և այլ, նկարիչը օգտագործել է ներդաշնակ, թեթև երանգներ ջրաներկով, իսկ որոշ գործեր էլ կատարված են յուղաներկի, գուաշի ընդգրկուն, ամբողջական, հնչեղ, խիտ ու վառ հյութալի գամմայով:

Խաչատուրյանը հմուտ կերպով արտահայտել է որբերի դեմքերի արտահայտությունները, կարողացել է տպավորիչ պատկերել մենավոր կանանց, ջարդերից հազիվհազ ճողոպրած հայ գաղթականության թշվառության տեսարանները, որի արդյունքում ստեղծել է սուր հոգեբանական իրատեսական պատկերներ: Կարծես հենց նկարչի հոգու պատառիկներ լինեն հայ գաղթականներ պատկերող այս գործերը:

Արվեստագետը «Հայկական շրջան» պատկերող մի շարք գործերում, մասնավորապես հայ գաղթականությանը վերաբերվող ստեղծագործություններում, սինթեզել է պատմական ժանրը բնանկարի ժանրի հետ: Դրանցում մանրակրկիտ պատկերված է բնությունն ամենայն մանրամասնությամբ: «Գաղթականներ» (1915), «Գաղթական կանայք» (1915),

«Հայ գաղթականներ» (1920-ական թթ), «Գաղթական որբեր» (1922-24) և այլ աշխատանքներն իրենց հնչեղ երանգապնակով ու լույսի առկայությամբ գերում են դիտողի ուշադրությունը: Դրանցում երևում են տաք ու վառ երանգներ՝ կարմիր, դեղին, վարդագույն, մանուշակագույն և լաջվարդ: Վառ գույներով կատարված այս ստեղծագործություններում ակնառու է ներդաշնակությունը՝ գույնի, ձևի և կոմպոզիցիայի հավասարակշռությունը, ամբողջականությունը: Խաչատուրյանը գույնի վարպետ է, որի աշխատանքներում գույները նրբորեն մերված են միմյանց հետ: Այստեղ օգնության են գալիս միջանկյալ գույները, որոնց սահուն, աստիճանական, մեղմ երանգները մի առանձին հմայք են հաղորդում ստեղծագործություններին:

1919թ. Պոլսում բացվում է արվեստագետի առաջին անհատական ցուցահանդեսը, ապա դրան հաջորդում է 1920թ. Թիֆլիսում բացված «Հայաստանն ու հայ ժողովուրդը» խորագիրը կրող ցուցահանդեսը:

1921թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները Սարգիս Խաչատուրյանին տալիս են պատվեր, ստեղծելու ՀԽՍՀ առաջին փոստային նամականիշների գծանկարներ: ՀՍԽՀ առաջին 16 փոստային նամականիշները տպվեցին Խաչատուրյանի ինքնօրինակ գծանկարներով:

1921թ. Խաչատուրյանը մեկնում է Պոլիս, որտեղ ցուցադրում է իր ստեղծագործությունները: Որոշ ժամանակ անց՝ նույն տարում, Եգիպտոսում Խաչատուրյանը կազմակերպում է իր հերթական անհատական ցուցահանադեսը: Պոլսում եղած ժամանակ ստեղծում է Կոնստանդնապոլիսը պատկերող նկարների շարք՝ «Կ. Պոլիս. Հայ կղզի» (1919), «Կ.Պոլիս. Գադ գյուղ» (1919), «Կոստանդնուպոլսի տեսարներ» շարքը (1919) և «Տրապիզոնի տեսարան» (1919) աշխատանքները, որոնք կատարված են օդային վետվետումներով, ջրաներկին ներհատուկ նրբերանգային անցումներով:

1922թ. Խաչատուրյան ամուսինները մեկնում են Վիեննա, որտեղ էլ սկսվում է նկարչի ստեղծագործական գործունեության երկրորդ շրջանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ կերպարվեստի մեծագույն վարպետ Ս. Խաչատուրյանը իր ստեղծագործական գործունեության առաջին շրջանի աշխատանքներով մի ողջ ժողովրդի պատմություն ներկայացրեց համայն աշխարհին: Դրանցում հավերժացված են հայոց պատմության ողբերգական էջերը՝ հիշեցնելով հայ ժողովրդի դեմ կատարված ոճիրը: Դրանք թե՛ իրենց պատմական արժեքով, թե՛ գեղագիտական ընկալումներով համարվում են հայ կերպարվեստի անդաստանի աննման գանձեր: Մենք խոսեցինք դրանցից մի քանիսի մասին, սակայն ստեղծագործությունները բազմաթիվ են, և յուրաքանչյուրն իր կատարման եղանակով և հորինվածքային ինքնատիպ լուծումներով դարձել է արվեստի իրական արժեք:

Չնայած այն բանին, որ հետագայում Խաչատուրյանը քանիցս վերադառնում է «Հայկական շրջանի» թեմայով աշխատանքներին, այդուհանդերձ նկարչի ստեղծագործական կյանքում սկսվում է նոր փուլ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Թորանեան Թ. (1983),** Արուեստի երկու երկրպագուներ Սարգիս եւ Վավա Խաչատուրեան, Նիւ Եորք, աղբյուր՝ djvu.
2. **Խաչատուրեան Ա. (1971),** Նկարչուհի Վավան Սարգիս Խաչատուրեանի մասին, «Սփիւռք», Բեյրութ, 14 մարտ, էջ 14-15, տպ. «Սեւան»:
3. **Կենսագրական տեղեկութիւններ եւ ամփոփ տեսութիւններ արուեստագէտներու մասին (1939),** Սարգիս Խաչատրեան, «Հայաստանի Կոչնակ», Նյու Յորք, թիվ 41, էջ 1122, «Կոչնակ» հրատ., Chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haygotchnag/1939/1939(41).pdf
4. **Կուրղինյան Կ. (1967),** Պանդուխտ նկարներ, «Սովետական Հայաստան», Երևան, թիվ 4, էջ 18-19, Հայպետհրատ:
5. **Կուրղինյան Կ. (1971)**, Սարգիս Խաչատուրյան, ցուցահանդեսի կատալոգ, Երևան, ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան:

6. **Վարսյան Շ. (1974),** Փշեր ու վարդեր, «Հայրենիքի ձայն», Երևան, թիվ 17, 24 ապրիլ, էջ 6-7, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե:
7. **Հայաստանի ազգային պատկերասրահ**, Հուշաձեռագրային բաժին, ֆոնդ 70, Ինվ.-19620:
8. **Հայաստանի ազգային պատկերասրահ**, Հուշաձեռագրային բաժին, ֆոնդ 70, Ինվ.-14246:

REFERENCES

1. **Toranyan T. (1983),** Two Art Admirers: Sarkis and Vava Katchadourian, New York, without a publisher, source: djvu.
2. **Khachaturyan A. (1971),** The artist Vava about Sarkis Katchadourian, “Spurk” , Beirut, March 14, publisher Sevan.
3. **Biographical Information and Brief Essays on Artists (1939),** Sarkis Katchadourian, Gotchnag Hayastani, New York, No. 41, p. 1122, The Gotchnag Publishing Company, Inc.

   Chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haygotchnag/1939/1939(41).pdf
4. **Kurginyan K. (1967),** Exile Paintings, “Soviet Armenia”, Yerevan, No. 4, pp. 18-19, Haypethrat.
5. **Kurginyan K. (1971),** Sarkis Katchadourian, Exhibition Catalog, Yerevan, GA Publishing, Etchmiadzin Printhouse.
6. **Varysyan Sh. (1974),** Thorns and Roses, “Hayreniky dzayn”, Yerevan, No.17, April 24, pp. 6-7, Committee for Cultural Relations with Diaspora Armenians.
7. **National Gallery of Armenia**, Manuscript Department, Fund 70, Inv.-19620.
8. **National Gallery of Armenia**, Manuscript Department, Fund 70, Inv.-14246.

Арпине Торикян

Первый период творческой деятельности Саркиса Хачатуряна

Заключение

Ключевые слова и выразжения: *Геноцид, беженцы, Саркис Хачатурян, Арарат, Константинополь, армянский период, психологические произведения в искусстве Саркиса Хачатуряна.*

В статье мы представляем первый этап творчества художника из армянской диаспоры- Саркиса Хачадуряна, когда он начал делать первые шаги в мир большого искусства. Мы придали особое значение историческим, политическим и всем остальным внешним факторам, которые способствовали становлению художника в процессе его развития. Первый творческий период Хачатуряна был в значительной степени связан с трагедией и страданиями его народа, свидетелем которых был и сам художник. С детства, переживший ужасы резни в годы правления Абдул-Хамида, художник и его творчество естественно были отмечены этими событиями.

Геноцид оказал большое влияние на Хачадуряна как на армянина, а также на его творчество, особенно в первый период. Это нашло отражение примерно в 500 графических и живописных работах художника.

Хачадурян постоянно находился в поиске, пытаясь найти себя в нескольких учебных заведениях, а так же в разных странах, и именно этот факт повлиял на многогранность выполненных работ художника разных тем разнообразной техникой. Он пробовал себя везде, создавая уникальное "хачатуряновское" искусство.

В статье описывается творчество Хачатуряна "армянского периода" и связанные с ним исторические и политические события, которые составили первый период творчества художника. Цель статьи - по-новому взглянуть на творчество художника и представить исторические особенности этого периода, которые были затронуты в его работах, посвященных геноциду.

Arpine Torikyan

The first period of Sarkis Katchadourian's creative work

Conclusion

Key words and expressions: *Genocide, refugees, Sarkis Katchadourian, Ararat, Constantinople, the Armenian period, psychological works in the art of Sargis Katchadourian.*

In the article, we present the first stage of the work of an artist from the Armenian Diaspora, Sarkis Katchadourian, when he began to take his first steps into the world of great art. We have attached special importance to historical, political, and all other external factors that contributed to the formation of the artist in the process of his development.

Katchadourian 's first creative period was closely linked to the tragedy and suffering of his people, which the artist himself witnessed. From a young age, having narrowly survived the Hamidian massacres, these events inevitably left a deep mark on both the artist and his work.

The genocide had a great impact on Katchadourian as an Armenian, as well as on his work, especially in the first period. This is reflected in about 500 graphic and pictorial works by the artist.

Katchadourian was constantly on the lookout and it was this fact that influenced the versatility of the artist's works on various topics with a variety of techniques. He tried himself everywhere, creating a unique "katchadourian" art.

The article describes Katchadourian's work of the "Armenian period" and related historical and political events that made up the first period of the artist's work. The purpose of the article is to take a fresh look at the artist's work and present the historical features of this period, which were touched upon in his works on the genocide.

Արփինե Թորիկյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ, Երևանի պետական հումանիտար քոլեջի դասախոս, ուսուցիչ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում: Գիտական հետաքրքրությունները՝ Հին աշխարհի արվեստ, հայկական մանրանկարչություն և սփյուռքահայ արվեստ: Ուսումնասիրության հիմնական թեման Սարգիս Խաչատուրյանի արվեստն է: Հեղինակ է երկու գիտական հոդվածի: arpine0306@gmail.com

Арпине Торикян - Соискатель кафедры истории, теории искусства и культурологии в АГПУ им. Х. Абовяна, преподаватель Ереванского государственного гуманитарного колледжа, учитель в базовой гимназии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Сфера научных интересов: Искусство Древнего мира, армянская миниатюра и армянское искусство диаспоры: Основная тема исследования искусство Саркиса Хачатуряна. Автор двух научных статей. arpine0306@gmail.com

Arpine Torikyan - Applicant of Chair of Art History, Theory and Cultural Studies at the Kh. Abovyan ASPU, lecturer at Yerevan State Humanitarian College, a teacher at the basic high school of the Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan. Scientific interests: The art of the Ancient World, the Armenian miniature and the Armenian art of the Diaspora. The main focus of the research is the art of Sarkis Katchadourian. Author of two scientific articles. arpine0306@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 16.11.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.11.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 21.03.2025թ.